

# Սյունյաց երկիր

ՈՒՐԲԱԹ, 6 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019Թ.  
№ 18 (508)

www.syuniacyerkir.am

**Ինչո՞ւ այդպես  
վախկոպ էք.  
դեռեւս հաւատ  
չունէ՞ք...**

**ՍՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ,  
Գլուխ Դ, 40**



## Բարի երթ, նոր ուսումնական տարի

Ժամանակի հոլովույթը կրկին մեզ մոտեցրել է գիտելիքի եւ դպրության օրվան՝ սեպտեմբերի մեկին:

**Ս**եպտեմբերի 1-ը՝ 2019-2020 ուստարին, որն առաջինը կլինի (նախնական տվյալներով) մարզի 1350 առաջին դասարանիների համար: Համեմատության համար նշենք, որ նախորդ ուստարի առաջին դասարան է հաճախել 1513 դպրոցական:

Օրվանը պատշաճ ու միջոցառումներ տե-

ղի ունեցան մարզի դպրոցներում, հնչեցին բարեմաղթանքի խոսքեր՝ ուղղված սովորողներին եւ նրանց ուսուցիչներին՝ լույսի եւ բարու սերմնացաններին:

Մարզում գործում է 117 հանրակրթական դպրոց, որից հինգը՝ ավագ դպրոցի կարգավիճակով, 75-ը՝ միջնակարգ, 34-ը՝ հիմնական, երկուսը՝ տարրական եւ մեկը՝ հատուկ կրթահամալիր:

«Սյունյաց երկիր» թերթի խմբագրակազմը միանում է օրվա շնորհավորանքներին, կրթական ոլորտի բոլոր աշխատողներին մաղթում ամուր առողջություն, հաջողություններ, դպրոցական սեղանների մոտ նստողներին՝ հետաքրքիր ճանփորություն գիտելիքների զարմանահրաշ աշխարհում: ■

### Վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ Սյունիքում

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն օգոստոսի 23-ին այցելել է Ամուլսարի հանքի ազդակիր Սարավան եւ Գորայք համայնքներ: Կառավարության ղեկավարը հանդիպել է տեղի բնակիչներին, լսել նրանց տեսակետները հանքավայրի շուրջ ստեղծված իրավիճակի եւ հարցի լուծման հնարավոր տարբերակների վերաբերյալ, ինչպես նաեւ պատասխանել նրանց հարցերին:

Վարչապետ Փաշինյանը շրջայց է կատարել նաեւ «Լիդիան Արմենիա» ընկերության լաբորատորիայում, որը գտնվում է Սյունիքի մարզի Գորայք համայնքում: ■

### Մարզպետարանների օպտիմալացման ծրագիրն արդեն պատրաստ է

«Տարածքային կառավարման մասին» օրենքի ընդունումից հետո միայն հնարավոր կլինի կրճատել մարզպետարանների աշխատակազմը: Ինչպես հաղորդում է «Արմենպրես»-ը, այս մասին Գյումրիում ձեպագրույցի ժամանակ նշեց ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Սուրեն Պապիկյանը: Օպտիմալացման ծրագիրն արդեն պատրաստ է: Դա կլինի օրենքին համապատասխան, մարդիկ 2 ամիս առաջ կձանուցվեն, եւ արդեն մրցութային կարգով կհամալրվի նոր հաստիքացուցակը՝ համապատասխան տվյալ մարզի պահանջներին»,- նշեց նախարարը:

Սեպտեմբերին ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության կողմից ՀՀ կառավարության հաստատմանը կներկայացվի տարածքային կառավարման օրենքի նախագիծ, որից հետո կմեկնարկի մարզպետարանների օպտիմալացման ծրագիր: ■

### «Վեոլիա ջուր» ՓԲԸ պատասխանատուներին իսկապե՞ս ապամոնտաժվում է Զվար-Մեղրի 2-րդ ջրատարը

«Սյունյաց երկիր» Մեղրի քաղաքի բնակիչներից ահագանգ է ստացել առ այն, թե ապամոնտաժվում է Զվարից Մեղրի ձգվող երկրորդ ջրատարը (խոսքը խմելու ջրի խողովակաշարի մասին է):

Նկատի ունենալով մեղրեցիների անհանգստությունը, հորդորում ենք «Վեոլիա ջուր» ՓԲ ընկերության պատասխանատուներին պարզաբանել՝ արդյո՞ք ապամոնտաժվում է այդ ջրատարը, որը ձեզերվայինի (պահեստայինի) դեր ունի մերկայումս: Եթե իրոք ապամոնտաժվում է, ապա ի՞նչ նպատակով եւ ի՞նչ են արվում ապամոնտաժվող խողովակաշարը: ■

## Գորիսն ու Կապանը կապող զբոսաշրջային արահետ է բացվել

ԵՄ դեսպան Պյոտր Սվիտալսկին օգոստոսի 24-ին Սյունիքի մարզում մասնակցել է Լեգենդների արահետի բացմանը, որը կապում է Գորիս ու Կապան քաղաքները:

Արահետը նախագծվել է «ԵՄ-ն զբոսաշրջության համար արկածային տուրիզմի զարգացումը պատմական Սյունիքում» ծրագրի շրջանակում: Բացման արարողության ժամանակ հյուրերը փորձարկել են արահետի 5 կմ-ը՝ հնարավորություն ունենալով տեսնել Կախարդական անտառը:

«Շատ ուրախ եմ մասնակցել Լեգենդների արահետի պաշտոնական բացմանը: Համայնքային զարգացումը ԵՄ առաջնային գերակայություններից է, եւ իմ անձնական ուշադրությունն ուղղված է այն նախաձեռնությունների խթանմանը, որոնք թույլ են տալիս Հայաստանի քաղաքացիներին եւ զբոսաշրջիկներին՝ վայելել այս երկրի գեղեցկությունը, միեւնույն ժամանակ ակտիվ կենսակերպ վարել: Կարող եմ միայն



ԵՄ դեսպան Պյոտր Սվիտալսկին մասնակցել է Լեգենդների արահետի բացմանը

խրախուսել ձեզ՝ արշավ պլանավորել Լեգենդների արահետում եւ բացահայտել թեյատները, հյուրատները, Կախարդական անտառն ու այլ ծառայություններ, որոնք համայնքի բնակիչները ստեղծել են ԵՄ աջակցությամբ»,- նշել է ԵՄ դեսպանը: ■

### Պաշտոնանկ է արվել Սյունիքի ոստիկանապետ Արշավիր Գելորգյանը

Աչքներս լույս, Սյունիքն ազատվեց այդ արհավիրքից:

Բացառիկ հեղությամբ էր պառկել Սյունիք ներխուժած օսմանցիների ոտքերի տակ:

Քանի-քանի քրեական գործեր հարուցվեց նրանց շաբաշի զորությամբ:

Քանի-քանի հանցագործություններ, օրը ցերեկով կատարված, մնացին չբացահայտված:

Այնպես որ՝ նրա անունը, իր հայտնի հովա-նավորի հետ, հավերժորեն կմնա Սյունիքի պատմության աղբանոցում: ■



# Չարենցը եւ Խրիմյան Չայրիկը եղել են Չարանց անապատում. «Սյունյաց երկիրն» այցելեց այդ սրբավայր, որ նաեւ Տաթևի անապատ է կոչվում

**Օգոստոսի 19-ին ուխտագնացություն կատարեցինք Տաթևի անապատ (Չարանց անապատ):**

Սաւանայի կամրջից իջանք Ռոտտանի կիրճ եւ գետի հունին զուգահեռ արահետով (սկզբից գետի ձախ ափով, ապա նորաշեն փայտյա կամրջով անցանք գետի աջ ափը) քայլեցինք դեպի հարավ-արեւելք:

Մոտ կես ժամ անց այնտեղ էինք: Գտնվում է Տաթև գյուղից ներքեւ (հարավ-արեւելք) Ռոտտանի եւ Տաթև գետակի միախառնման եռանկյունու վրա:

Ուշ միջնադարի հայկական ճարտարապետության արժեքավոր եւ հետաքրքիր համալիրներից է:

17-րդ դարի կրոնական եւ ուսումնական կենտրոն է:

Ստեղծման առիթը նույն ձրում՝ դեպի արեւելք, գտնվող Չարանց մեծ անապատի կործանումն էր (1658-ի երկրաշարժի հետևանքով), որից երկու տարի անց միաբանությունը տեղափոխվեց նոր վայր եւ կառուցեց այս անապատը:

Համալիրը կառուցվել է կանոնավոր հատակագծով:

Շրջապատված է բարձր ուղղանկյուն պարիսպներով:

Անապատի հարավ-արեւմտյան մասում սրբատաշ բազալտից շինված Սուրբ Աստվածածին եռանակ բազիլիկ եկեղեցին է (1663 թ.), որին արեւմուտքից կից է գավիթ-սրահը (կառուցել է Մելիք Եգանը, 1743-ին):

Հյուսիսից՝ զմբեթավոր փոքր մատուռ-դամբարանն է, որտեղ թաղված է 1669-ին մահկանացուն կնքած՝ Անապատի հիմնադիր Արիստակես վարդապետը:

Եկեղեցուց արեւելք գտնվում են կիսաբանդ շենքեր, դեպի հարավ՝ սեղանատունը, իսկ մերձակայքի աղբյուրը ցամաքել է:

Բակում կանգուն է բնակելի սենյակների մի այլ խումբ՝ Գ-աձև ընդհանուր հատակագծով: Հարավային կողմում օժանդակ մասն է:

\* \* \*

Գիտական գրականության մեջ առայսօր չփորձ են Տաթևի անապատը (Չարանց անապատը) Սյունյաց մեծ անապատի (Չարանց մեծ անապատի) հետ, որ գտնվում է հին Հալիձոր գյուղի դիմաց՝ Ռոտտան գետի աջ ափին:

Չարանց մեծ անապատի կործանման պատճառ դարձած երկրաշարժին ակնատես է եղել Առաքել Դավրիժեցի պատմագիրը, ինչի մասին շարադրել է իր հայտնի «Պատմության» մեջ:

Այդ մասին ուրիշ անգամ, երբ կայցելենք Սյունյաց մեծ (Չարանց մեծ) անապատ:

\* \* \*

Չարանց անապատին այս անգամ նայեցինք ուրիշ աչքերով:

Հիշեցինք մեր հայրենակից Յուրի Սահակյանի գրույցը Չարենցի Չարանց անապատ այցելելու մասին, որ ներկայացրել է Մորուս Հասրաթյան հայագետին:

Տաթևացի մեղվապահ Անդրանիկ Գեւորգյանը հետեւյալն է պատմել Յուրի Սահակյանին:

«... Նա մի օր հայտնվեց մեր կորած-մոլորված աշխարհում ու ինչպես եկել էր, այնպես էլ գնաց:

Էն ժամանակ կլիներ 18 տարեկան: Աշխատում էինք... ծառի հետեւից դուրս եկավ մի երիտասարդ՝ ուսապարկը մեջքին, բառիկաներով: Բարեւեց մեզ, սեղմեց ձեռքներս, հարցրեց հալներս ու մտավ Անապատ: Նայեց, շոշափեց ամեն մի քարը:

«Լավ պահպանեցեք մեր հնությունները, մեր ժողովրդի, ազգի հարստությունները»,-ասաց:

Իսկ երբ եղավ այս հյուրասենյակում, դարձավ ինձ.

– Կարելի՞ է մի քիչ չոր փայտ:

– Իսկ եթե չոր խո՞տ լինի...

– Կարելի է, բերեք:

Երբ փոքրիկ խարույկը լուսավորեց ողջ սրահը, ամճանորը գործի դրեց լուսանկարչա-

կան ապարատը:

«Պու էլ կանգնիր»,-դարձավ նա ինձ: Կանգնեցի: Լուսանկարեց ու բարեկամաբար ասաց. «Երբ մեծանաս, կասես, որ ինձ լուսանկարեց եղիչե Չարենցը»:

Դե ով էր լսել Չարենցի անունը մեր մթին ձորերում...

Այդ տարի խաղողի լավ բերք կար:

Կանանցից մեկն ընտրել էր խաղողի ամենալավ ողկույցներն ու քանում էր հյութը: Իսկ Աբուլ մայրիկը մի լավ ողկույց ձեռքին մտնեցավ անձանոթ հյութին:

Չարենցը լուսանկարեց նրան ու վերցնելով խաղողը՝ հաճույքով կերավ:

«Այսքան ինձ բավական է»,- ասաց նա, ծոցատետրի մեջ վերջին նշումները կատարեց ու բռնեց վերադարձի կածանը»:

Սկզբում Մորուս Հասրաթյանը չէր ուզում լսել մեղվապահ Անդրանիկի գրույցը, որ ներկայացնում էր Յուրի Սահակյանը, բայց հետո... Նա էլ համոզվեց, որ Չարենցը եղել է Սյունյաց աշխարհի այս անկյունում՝ Տաթևի (Չարանց) անապատում:

\* \* \*

Անապատի կամրջից մեզ ուղեկցում էր մի հրաշալի անձնավորություն՝ Խաչատուր Հակոբյանը՝ Տաթև գյուղից:

Նա հետաքրքիր պատմություններ ներկայացրեց Անապատի ձորի մասին:

Խաչատուրից իմացանք, որ Խրիմյան Չայրիկը (Մկրտիչ Ա Վանցի Աննայն հայրը կաթողիկոս, հասարակական-քաղաքական եւ հոգեւոր-մշակութային գործիչ) 20-րդ դարասկզբին Տաթևի վանք կատարած ուխտագնացության ժամանակ այցելել է նաեւ Չարանց անապատ:

Եվ Անապատի կենտրոնում նրա տնկած թթենին մինչեւ հիմա պահպանվում է:

Խաչատուր Հակոբյանը մեզ ցույց տվեց Անապատի մերձակայքի այգիները, որոնք 1991-ին սեփականաշնորհվել են ու դարձել անմշակ:

Տաթև գետակից դեպի այգիներ ձգվող

ոռոգման առուները եւ խողովակները հիմա բանդված եւ անօգտագործելի վիճակում են:

Սաւանայի կամրջից մինչեւ Չարանց անապատ՝ մոտ 1,5 կմ, ձգվում է բանուկ արահետ. սա Չարանց անապատ տանող ամենակարճ եւ հարմար ճանապարհն է:

Արահետի վրա հանդիպում ենք վահանակների, որոնց վրա լուսանկարներով ցույց է տրվում, թե ինչ կենդանիներ եւ թռչուններ են բնակվում հրաշալի այդ ձորում:

Եվ Անապատում, եւ կածանով երթելու լիս հանդիպեցինք զբոսաշրջիկների՝ Իտալիայից, Չեխիայից...

Ըստ Խաչատուր Հակոբյանի՝ գրեթե ամեն օր զբոսաշրջիկներ են այցելում Չարանց անապատ:

Անապատում մեզ մի այլ անակնկալ էր սպասվում:

Պարզվում է՝ հինգ տարի շարունակ այդտեղ է բնակվում Հակոբ վանականը՝ միայնակ: Գյումրիից է, 2014-ին այցելել է Երուսաղեմ՝ Տիրոջ գերեզմանին: Եվ այդքանից հետո գերադասել է բնակվել հենց Տաթևի անապատում:

Հակոբ վանականը քաջատեղյակ էր Անապատի պատմությանը:

Հաճելի էր տեսնել, թե ինչպիսի մաքրություն է տիրում համալիրի ամբողջ տարածքում, խցերում, եկեղեցում:


Անապատի կենտրոնում՝ Խրիմյան Չայրիկի տնկած թթենու մոտ, նորաշեն մի խաչքար կա, որ նաեւ աղբյուր է:

Պարզվում է՝ ջուրն Անապատ է բերվել մոտ մեկ կմ հեռավորությունից:

Եվ բարի այդ գործը, ինչպես եւ խաչքար կանգնեցնելը, երկու տարի առաջ իրականացրել է Վարդապետ Միքայելյան անունով գործիչի երիտասարդը, ում մասին եւ Հակոբ վանականը, եւ Խաչատուր Հակոբյանը երախտագիտությամբ էին խոսում:

**Հ. Գ. Անապատայն այցելեք Չարանց (Տաթևի) անապատ: Եվ միայն դրանից հետո կհամոզվեք, որ հոգեւոր-մշակութային այդ համալիրն անկրկնելի ճարտարապետական կառույց է ոչ միայն Սյունիքում, այլեւ Չայրց մեջ ընդհանրապես: Եվ միայն այցելելուց հետո հասկանալի կդառնա, թե ինչու Չայրց համճարը՝ եղիչե Չարենցն ուխտագնացության եկել հենց այդ սրբավայր:**

**Սամվել Ալեքսանյան**  
Լուսանկարները՝ Սոնա Արզումանյանի



# «... ԷՆ ԱՇԸՂԸ ՄԵՐ ԴԱԴԱԼՈՒՆ ԽՈՒՄՈՐՅԱՆ Ա...»

**Խորհրդածություններ ժողովրդական ու աշուղական երգի ներկա վիճակի, Գուսան Աշուղի կենսագրության անհավոդ որոշ փաստերում նշարկներ մտքներու անհրաժեշտության շուրջ «Սյունյաց երկիր» թերթի հրատարակումներից մեկի առնչությամբ**



ԳԱԳԻԿ ՀԱՅՐՈՒՄՅԱՆ

## «Սյունյաց երկիր» թերթի մեծարգո գլխավոր խմբագիր, հարգելի Սամվել Ալեքսանյան

Ինձ միշտ համարել եմ եւ կամ Ձեր թերթի ընկերն ու բարեկամը, այդ մասին գրել ու բարձրաձայնել եմ տարբեր առիթներով: Տպագիր պարբերականի լինելիության մեր դժվարին ժամանակներում «Սյունյաց երկիրը»՝ իր կոչմանը հավատարիմ, ակնհայտորեն ունի սեփական դեմք, հոգս, ցավ, նպատակներ ու խնդիրներ եւ, որ ամենակարեւորն է՝ անգիջում կամք ու ոգի: Հատուկ համարները, որոնք հիմնականում միտված են մշակութային արժեքները կորստից փրկելու, պատմական մասունքները գիտական խորաքափանցությամբ ժողովելու եւ ամբողջացնելու վեհ նպատակներին, թերթի բարձր առաքելության բնութագիրն

ու գրագիտության չափանիշն են: Կարծում եմ, որ նվիրումով ու քրտնաջան աշխատանքով տոգորված նման փոքրաթիվ մի կոլեկտիվի գործունեությունն իսկական սիրանք է...

Այդպիսի ջերմությամբ է ստեղծված նաեւ Գուսան Աշուղի 110-ամյակին նվիրված հոբելյանական համարը, որը նշանակալի ներդրում է մեծ գուսանի եւ աշուղական արվեստի մեկնության տիրույթում՝ ներկա եւ գալիք սերունդների համար:

Հոբելյանական համարի հրատարակման առաջին, թե երկրորդ օրը մեքսե հեռախոսագրույց ունեցանք: Արդեն համարը կարդացել եւ տեղադրել էի «syunik.ru» կայքում: Շնորհավորելով համարի ծնունդը, ասացի նաեւ, որ որոշ վերապահումներ ունեն հրատարակված առանձին փաստերի առթիվ...

Առաջին հարցը, անշուշտ, այն կլինի, թե ինչո՞ւ հոդվածը չի գրվել երկու տարի առաջ... Նախ, հավատացե՛ք, Գուսան Աշուղի որդու՝ Համլետ Դադայանի հետ Ձեր հարցազրույցը կարդալուց հետո երկար ժամանակ իմ մեջ ստեղծվել էր մի անորոշ վիճակ: Պարզ ու հասկանալի ճշմարտություններ, հարցեր, որոնք անձամբ ինքս տարբեր առիթներով քննարկել եմ հենց իր՝ Գուսանի հետ, «օրվա տիրոջ կողմից» ներկայացվել էին ոչ թե սխալներով, այլ՝ ամբողջությամբ շրջված: Վերջին ամիսներին լինելով Երեւանում, ծանոթանալով նոր արխիվային նյութերի, վերծանելով Գուսան Աշուղի կենսագրության հետ կապված որոշ փաստեր, կարելի դարձավ է այդ հարցում հստակություն մտցնելը:

Տեղին եմ գտնում նշել, որ Գուսանի կեն-

սագիրները (Ս.Խանգաղյան, Է.Ջուրաբյան, Ա. Կարապետյան), յուրաքանչյուրն իր հերթին, աշխատել են Գուսանի կենսագրությունը գեղեցիկ ներկայացնել, զուսնագրողել, որից եւ առաջ է եկել անճշտությունների մի մասը: Նրանց կրկնել է Գուսանի դուստրը՝ Արշալույս Դադայանը (2010 թ., «Հավերժություն» երգարանի առաջաբան) եւ հիմա էլ՝ որդին:

Առկա թյուրիմացությունների պատճառներից մեկն էլ այն է, որ Գուսանի մահից անցել է երեսուն տարի, բայց մինչեւ այժմ ընթերցողին չի հասել մեծ երգահանի գրած «Կյանքիս հեքիաթը» ինքնակենսագրականը: Համլետ Դադայանը Ձեզ ասել է, որ առաջին հակված չեն այդ նյութերը տրամադրել որեւէ մեկին: Նմանատիպ մի պատասխան նա տարիներ առաջ տվել էր նաեւ իմ ընկերոջը, որն իմ անունից ներկայացել էւ կայքի համար խնդրել էր Գուսանի գրած ինքնակենսագրականը: Հարցազրույցում Դուք նրբորեն շրջանցում եք այդ խնդիրը, բայց ինչ-որ մեկը, այնուամենայնիվ, պետք է բարձրաձայնի, որ «Կյանքիս հեքիաթը» Գուսանը գրել է ոչ թե փակի տակ պահելու, այլ՝ իր երկրպագուների, ընթերցող կայք շրջանների համար...

Հիմա փորձենք վերլուծել մի քանի հանգուցային հարցեր:

Անկեղծորեն ուզում եմ ասել, որ Ձեր հարցազրույցում ինձ ամենից շատ տխրեցրել է մի արտահայտություն. «...Իսկ կայքերից մեկում էլ...»: Իհարկե, անգեւն աչքն էլ տեսնում է, որ խոսքը «gusanashot.com» կայքի մասին է եւ նույն աչքն էլ նկատում է, որ հոդվածագիրը կարելի էր ինքնաբերաբար նշել կայքի անունը... Ցավալիկն այն էր, որ ինձ համար շատ պատվարժան մի պարբերական անձայրածիր մեդիադաշտում չի գգում իր հերոսին ներկայացնող այդ եզակի տիրույթի դերը, նշանակությունը, կարելիությունը, որին ինքը հարյուրավոր էջեր է նվիրում... Գրողի ճանաչումն ուղիղ համեմատական է այն փաստին, թե ինչքան են ընթերցում նրա ստեղծագործությունները, իսկ երաժշտիկը՝ ինչքան են լսում... Իսկ թե քանի գիրք կգրվի այդ արվեստագետի մասին, ոսկե տառերով, թե՛ արծաթե, դրանք բոլորը հա-

մանար ընտրվել են նշանավոր նկարիչների թեմատիկ կտավներ: Եվ վերջապես՝ այն օգտագործվում է երեք լեզուներով: Արվեստագետի գեղարվեստական ժառանգության ընդգրկմամբ, ֆունկցիոնալ հնարավորություններով եւ ամբողջականությամբ նման կայքեր քիչ կան նաեւ ռուսական իրականության մեջ: Գլխավոր ուղեցույցը մեզ համար եղել է Առնո Բաբաջանյանի պաշտոնական կայքը, որն ստեղծվել էւ պահվում է «Առնո Բաբաջանյան» ֆոնդի կողմից:


Գուսան Աշուղի կայքը համացանց մուտք գործելուց անցել է վեց տարի: Գլխավոր էջի ներքեւում տեղակայված հաշվիչն այսօր մեզ հուշում է, որ այդ ընթացքում կայքն ունեցել է 33 690 այցելու, ովքեր լսել են 174 740 կատարում: Մեծ դաշիվներում կազմակերպված քանի՞ համերգի ծավալ ու կշիռ ունի այս թվաբանությունը... Կարծում եմ՝ անհամեստություն չի դիտվի, եթե ասեն, որ այս գործընթացն ինքն է մեր հայրենակից, գործարար Վարուժան Իսուկցի (ով կայքի ծրագրավորման եւ անցած ժամանակաշրջանում դոմենի պահպանման հովանավորն էր), անձնական ներդրումն է Գուսան Աշուղի արվեստի տարածման ու մասսայականացման ճանապարհին:

Հիմա հարց է ծագում. գոհացուցի՞չ են այդ թվերը... Իհարկե՞ ոչ: Ցավով պետք է նշեն, որ վեց տարվա ընթացքում, կայքի մասսայականացման առումով, որեւէ աշխատանք չի տարվել եւ որեւէ գովազդ չի եղել: Եթե մեր սիրելի «Սյունյաց երկիրը» վերցնեք շեֆությունը եւ իր ընթերցողներին ժամանակ առ ժամանակ հարցներ, թե նրանք ծանոթ են կայքին, այցելում են, լսում են, իրենց սիրած երգերը սիրված արտիստների կատարմամբ՝ այդ թվերը կրկնապատիկ, գուցե եւ տասնապատիկ լինեին...

Իսկ երբ նայում ենք վերջին հինգ տարիների այցելությունների դինամիկային, իրավիճակն ավելի ցավալի է դառնում:

Այս տխուր իրավիճակը պետք է համարել ոչ թե անտարբերություն Գուսան Աշուղի արվեստի, այլ՝ ժողովրդական եւ աշուղական երգի նկատմամբ՝ ընդհանրապես: Չեն ցանկանում

### gusanashot.com վերջին հինգ տարիների այցելությունների դինամիկան



Սիւսայպես՝ ըստ տարիների իջնում է կորը (վերելիւնը այցելուներն են, ներքեւիւնը՝ լսումները)

վելյալ է, հրատարակումից մի քանի օր հետո դասվում է մասնագիտական գրականության շարքը, դրվում է դարակներում եւ հետո դրանից օգտվում են միայն տվյալ թեմայով զբաղվողները: Կարծում եմ, որ Գուսանի արվեստի միջոցառումների համար պետք է առաջնային լինի նրա երգերը հնարավորինս տարածելու, մասսայականացնելու, ամենուր եւ ամեն պահի լսելի դարձնելու խնդրի իրականացումը, որն էլ «gusanashot.com» կայքի գլխավոր նպատակն է: Այն միակ ծայնադարանն է, որտեղ կան անցած 80 տարիների (սկսած 1935 թվականից) Գուսանի բոլոր գործիքավորված եւ կատարված երգերը, բոլոր պրոֆեսիոնալ կատարումները:

“ Կարելի էր եւ համարում նշել, որ կայքի էլեկտրոնային ծրագրավորումն իրականացվել է մոսկովյան բարձրակարգ մասնագետների կողմից, որ այն ստեղծելուց առաջ ուսումնասիրվել է նմանատիպ տասնյակ կայքերի կառուցվածք ու դրանցից քաղվել են լավագույն գործակիցները:

Յուրաքանչյուր երգի էջ ներկայացնում է երաժշտական ֆոնդերում եւ ինտերնետ պորտալներում պահպանված աուդիո, վիդեո ձայնագրությունը, երգի նոտաները, տեքստը, երգիչի լուսանկարը, ձեւավորման

ծավալվել ցավոտ թեմայի մեջ, բայց այդ նպատակով պետական հիմնարար ծրագրերի բացակայության, հեռուստատեսության այսօրվա անտարբեր պահվածքի եւ իրավիճակի համար պատասխանատու չլինելու պարագայում պատկերն այլ կերպ լինել չէր կարող:

Մենք, իհարկե, շատ տխուր ու մտահոգիչ թվաբանություն ունենք նաեւ Գուսան Աշուղի ստեղծագործությունների մասսայականացման ուղղությամբ: Վարպետի կողմից ստեղծված ու նոտագրված ավելի քան 500 երգերից բոլոր ժամանակներում կատարվել են Գուսանի կողմից մինչեւ անցած դարի 60-ական թվականները գրված երգերը, որ անվանի երգահանի կյանքի վերջին 30 տարիների ստեղծագործություններից գրեթե ոչինչ չի կատարվել: Այդ ընթացքում, անշուշտ, եղել են նոր կատարումներ, սակայն բոլոր երգիչները ձեռք են մեկնել միայն հին, արդեն հայտնի եւ մշակված երգերին:



(Գորիս գյուղը, քաղաքը, Հին Գորիսը եւ Բռու-  
նը) մինչեւ խորհրդային կարգերը եղել են նույն  
համայնքի կազմում: Մինչեւ 1900 թվականը  
ծնունդների, կնունքների, ամուսնությունների  
ու մահվան գրանցումները կատարվել են  
միայն Գորիս գյուղի սբ Յովհաննէս եկեղեցում:  
1900-ից, հյուսիսային համայնքներն համեմա-  
տաբար խոշորանալու եւ տարածաշրջանում  
վտանգներն ավելանալու պատճառով, Հին  
Գորիսի սբ Գեորգ (Նորակնունք) եկեղեցուն  
եւս, իսկ 1903 թ.՝ նորակառույց սբ Գրիգոր լու-  
սավորիչ եկեղեցուն թույլատրվել է կատարել  
այդ ծիսակարգերը: Եկեղեցու ընտրությունը չի  
սահմանափակվել, արարողակարգերը կատա-  
րել են՝ ով որտեղ ցանկացել է: Գորիս բնակա-  
վայրի վերին շեն եւ ներքի շեն արտահայտու-  
թյուններն օգտագործվել են իբրեւ ոչ հատուկ  
անուններ, իբրեւ նույն շենի երկու մասեր: Իսկ  
Վերիշեն ձեւը, առանց համայնքի հետ համա-  
ձայնեցնելու, շրջանի ղեկավարների կողմից  
տրվել է խորհրդային տնտեսությանը, երբ Հին  
Գորիսի «Կարմիր հոկտեմբեր» կոլտնտեսու-  
թյունը վերակազմավորվել եւ դարձել է Վերի-  
շենի կաթնամսնապահական սովխոզ (1957  
թ.): Գյուղական խորհրդի կնիքը փոխվել է դրա-  
նից ավելի քան 20 տարի հետո՝ 1979-1980  
թվականներին (Հին Գորիսի փոխարեն գրվել  
է՝ Վերիշեն), եւ այն էլ, հավանաբար, ինչ-որ մի  
ղեկավարի ցուցումով կամ գրությամբ, քանի  
որ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահու-  
թյան նման հրամանագիր գոյություն չուներ:



Ափուն բառը

Մեկ են արտագնա աշխատանքի, կարծում են՝  
Բաքու եւ հավանական են համարում, որ «սե-  
լիքը» կուլ է տվել նաեւ նրանց:  
Դադայաններից գլխավոր սեփականա-  
տերը Հին Գորիսում Վարդան Դադայանն  
է եղել (թժշկական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր Վազգեն Դադայանի հայրը), որի  
տնտեսությունում աշխատել են նաեւ Հայրա-  
պետը, նրա առաջին, ապա՝ երկրորդ կանայք:  
Թեեւ ծագող վեճերից հետո Հայրապետը հա-  
մախ է թողել ու հեռացել, բայց Վարդանը եր-  
բեք բախտի քմահաճույքին չի թողել նրա  
ընտանիքը: Ակներ սարի Դադայանց յայլա-  
ներում Բալախանումը եղել է Վարդանի կնոջ՝  
Մանուշակի աջ ձեռքը, գլխավոր օգնականը:  
Մի առիթով Գուսանը պատմեց, թե 1915 թ.  
ամռանը, երբ չորս աղջիկ ունենալուց հետո  
Վարդանի կին Մանուշակը ծնեց Վազգենին,  
ինչ քեֆ-ուրախություն էր Իշխանասարի յայ-  
լաներում, Վարդանին ծանոթ քանի տասնյակ  
ծիպոր էր ոչխարներով եկել աջբալուսանքի...  
Դադայանների հայտնի տան աջ կող-  
մում՝ մեծ պատշգամբի վրա բացվող սենյակ-  
ներում՝ ապրել է Վարդանի ընտանիքը, շենքի  
ծախ հատվածի սենյակները եւ պատշգամբը  
զբաղեցրել է Գալուստի գերդաստանը (այս  
պատշգամբում 1921 թվականի հունիսի 25-ին  
դաշնակները սպանել են Տեր-Հակոբը Տեր-Մի-  
նասյան քահանային, նրա որդուն գյուղի հեղ-  
կոմի նախագահ Մուշեղ Մինասյանին, ծանր  
վիավորել են տերտերի կնոջը՝ Դիանային):  
Նույն շենքի առաջին հարկի աջ դռան ու պա-  
տուհանը թոնրատունն է եղել, իսկ կամարա-  
կապ դաբից ներս գնացող դռները տարել են  
սենյակ, որտեղ ապրել է Հայրապետի ընտանի-  
քը, եւ քարտակ-մառան...

Ի դեպ՝ «կամարակապ» բառը հիշեցրեց՝  
չմոռանալ. Գուսանի մասին Անդրանիկ Կա-  
րապետյանի ուսումնասիրության մեջ, ներկա-  
յացնելով Հայրապետին, հեղինակն ասում է.  
«... հողագործ լինելուց բացի նաեւ ճանաչված  
որմնագիր էր: Հին Գորիսի (ընդգծումն իմն է՝  
Գ.Հ.) կամարակապ շատ տներ եւ այլ կառույց-  
ներ նրա ձեռքի դրոշմն են կրում»: Հիշեցրեց, որ  
Ա.Կարապետյանը միակ ուսումնասիրողն էր,  
որ կարդացել է օգտվել էր Գուսանի «Կյանքիս  
հեքիաթը» ինքնակենսագրականից եւ արտա-  
հայտությունը, հավանաբար, վերցրված է հենց  
այնտեղից: Իսկ ահա հարցազրույցում «Հին  
Գորիսը» դարձել է Գորիս...

Չանգեզուրի խորհրդայնացումից հետո  
Հին Գորիս գյուղի հեղափոխական կոմիտեի  
առաջին գործը եղել է հանրակրթական մոր  
դպրոցի ստեղծումն ու անգրագիտության  
վերացումը: Առաջին տարում դպրոցը գոր-  
ծել է Վարդան Դադայանի տանը: Առաջին  
դասարանի առաջին աշակերտներից է եղել  
նաեւ հայրս: Նա պատմում էր, որ քանի որ  
այդ տարիներին գյուղի եկեղեցու տնտեսա-  
կան հարցերի պատասխանատուն Հայրապետ  
Դադայանն էր, եւ դպրոցն էլ իրենց տանն էր,  
նրան էր համընդարարվել հոգալ նաեւ դպրոցի  
տնտեսական հոգսերը՝ փայտ ջարդել, վառա-  
րանը վառել, ջուր բերել, սեղան-նստարաննե-  
րը տեղադրել, նորոգել եւ այլն... Պատմում էր,  
թե ինչ խստաբարո մարդ էր եւ ինչպիսի պա-  
տասխանատվությամբ էր կատարում իր գոր-  
ծը...

Աշոտի բանաստեղծական արվեստն ու-  
սումնասիրողների համար նշան է, որ իր երգե-  
րում մեծ գուսանն անդրադարձել է գրեթե բո-  
լոր հայոց սիմվոլներից ու սրբություններից՝  
Արարատ, Արագած, Արաքս, Սեւան, Հրազ-  
դան, Որոտան, Սյունիք, Գարաբաղ, Անի, Շի-  
րակ, Ջավախք, Երեւան, Շուշի եւ այլն, բայց իբ-  
րեւ տեղանուն, իբրեւ իր սիրո, իր խաղերի, իր  
նվիրական իղձերի կատարման, իրականաց-  
ման վայր ակնարկել է միայն իր մանկության  
վայրերը՝ «Աղջիկները Սանդ աղբյուրից ջուր  
կառնեմ, Սեկ սիրտ կտամ, մեկ էլ սիրտս կտա-  
նեմ... («Ինչ լավ է»), «Սըն յեկ իրուր խտտեմք  
Ափուն թառունը», «էլ ծուն չի կա, Մեծ ըռոնին  
թախկալ ա», «Ակնին ճյուրը քլթթալի քյունում  
ա», «Եկ նստեմք Դուրուղա թիփին դնշարունը»  
 («Չոր չլուրը ծաղկել են»), «Միաջառի քեղի գո-  
խը, իմ պապը արածանով էր ուտում» («Միա-  
ջառի քեղուտում»), «էս գիշեր իմ երագին ելա  
սարը Իշխանս, Աշոտ յայլան քո պապի հո-  
գուր երգեր կկապի» («Մորս փեշը բռնած»),  
«Հարայ եմ տամ, ինձ կանչում Ակներ յայլան  
Դադայունց» («Ակներ յայլան Դադայունց»),  
«Որսածորի արծազանքով հմայված» (Որ-  
սածոր, Ավու դարա, «Սազս մնաց»), «Սեւանի  
քյուր՝ ծովակ Իշխանս» («Ծովակ Իշխանս»),  
«Ուխտ են արել, ալ սարեր, Գորիսից մինչ լույս  
Ակներ, Սեղան բացեմ տոն օրվա, երգով մաղ-  
թեմ կենացներ» («Երագանքիս կիսանեմ»): Այս  
ընտրանքն Գուսան Աշոտի միայն երկու ժողո-  
վածուներից է քաղված, դրանք մեծ քանակու-  
թյամբ կան նաեւ մյուս երգարաններում:


Այս ամենը, անշուշտ, համոզիչ փաստեր  
են, բայց ինքս էլ գիտեի, որ դրանք անվիճելի  
դարձնելու համար, այնուամենայնիվ, բացա-  
կայում է ամենագլխավորը՝ ինչ որ վկայու-  
թյուն, որտեղ սեւով սպիտակի վրա գրված  
պիտի լինի, որ այդ տարիներին Հայրապետ  
Դադայանը եղել է Հին Գորիս գյուղի բնակիչ,  
համայնքի անդամ, ինչ որ ունեցվածքի տեր,  
կամ նման մի բան... Նմանիք բարդ էր, քանի որ  
այդ տարիներին մարդահամար չէր եղել, Հայ-  
րապետը հողատեր չի եղել, իսկ համայնքնե-  
րի բնակիչների ամբողջական ցուցակներ  
արխիվներում չկան: Նայեցի հավանական մի  
շարք աղբյուրներ՝ անարդյունք... Եվ ինչպես  
ժողովուրդն է ասում՝ ճշմարտություններն  
անթելվում են, բայց չեն մեռնում... Ամիսներ  
առաջ ՀՀ ազգային գրադարանում թերթում էի  
XX դարասկզբի Գորիսում լույս տեսած պար-  
բերականների արխիվները, եւ ի՞նչ... Գտնվեց  
«բարաթը»...

«Կարմիր ռաշպար» գավառային թերթի,  
1924 թ. օգոստոսի 29 -ի, թիվ 29 համարում  
տպագրված թղթակցությունը, որը մեջ են բե-  
րում ամբողջությամբ, ցույց է տալիս ոչ միայն  
Հայրապետ Դադայանի՝ Հին Գորիսի համայն-  
քի անդամ լինելը, այլեւ՝ նրա հեղինակու-  
թյունն այդ համայնքի կազմում (ցուցակում  
համայնքի ներկայացուցիչ երեքից առաջինը  
գյուղխորհրդի նախագահ է դարձել նշված  
Ասատուրից հետո, երկրորդը՝ մինչխորհրդա-  
յին կարգերը եղել է գյուղի քոյակվան եւ երրոր-  
դը՝ ինքն է):

«1924 թ. սկզբին նորաստեղծ խորհրդա-  
յին երկիրն ընդունեց որոշում պետական  
ապահովագրության մասին: Հին Գորիսում  
համայնքի ժողովը առաջիններից մեկը որոշեց



Սանդ աղբյուր, հեղ.՝ Մայիս Ջաղայան



Մեծ ըռոնի

ապահովել գյուղի բոլոր ցանքերը, շինություն-  
ներն ու անասունները բնական աղետներից  
ու չարիքներից: Ապրիլի 30-ին Հին Գորի-  
սի ուղղությամբ կարկուտ եկավ: Պետական  
ապահովագրության գործակալն անմիջապես  
գնաց Հին Գորիս գյուղը եւ համայնքի ներկա-  
յացուցիչների հետ կազմեց հետեւյալ արձա-  
նագրությունը. «Մենք ներքո ստորագրողներս՝  
Պետապի Չանգեզուրի գործակալ Արտավազ  
Ավագյան, գյուղխորհրդի նախագահ Ասատուր  
Սաֆարյան, Պետապի կողմից՝ գյուղատնտես  
Հակոբ Միրաբյանի, Հին Գորիս գյուղի կողմից՝  
Ասատուր Մաշուրյանի, Աբգար Խուրշուդյանի,  
Հայրապետ Դադայանի (ընդգծումներն իմն  
է՝ Գ.Հ.) ներկայությամբ շրջեցինք Հին Գորիսի  
ցանքերը եւ գտանք, որ ապրիլի 30-ին, 1924  
թ., երեկոյան ժ. 6-ին, 15 րոպե տեղացել է կար-  
կուտ հյուսիս-արեւմուտքից հարավ-արեւելք  
ուղղությամբ 208,33 դեայառիս տարածության  
վրա: Կանաչների կարծ ծիլերի պատճառով  
վնասներ չեն եղել:

Քննիչ հանձնաժողովը գտավ, որ Հին  
Գորիսի ցանքերը եկած կարկուտից վնաս  
չեն ստացել, որի համար եւ ստորագրում ենք.  
(ստորագրությունները)»: («Կարմիր ռաշպար»  
թերթի 29 օգոստոսի 1924 թ. թիվ 29):

Կարծում են, որ հիմա արդեն կարող ենք  
ամփոփել: Աշոտը սովորել է Հին Գորիս գյուղի  
եկեղեցուն կից ծխական դպրոցում, ամենայն  
հավանականությամբ՝ Բագրատ Առուշանյանի  
հետ (հետագայում՝ գեներալ-լեյտենանտ):  
Ժամանակաշրջանը թելադրում է եզրակացնել  
նաեւ, որ նրանց ուսուցիչը պետք է եղած լի-  
նի հայերենին լավ տիրապետող ուսյալ մի  
երիտասարդ, հետագայում ցարական բանա-  
կի սպա՝ Կարապետ Բաբայանը, ով գոհվել է  
Առաջին համաշխարհային պատերազմում:  
Եվ, իմ կարծիքով, Աշոտի լեզվի մաքրությու-  
նը հենց այս ակունքն ունի: Մեզ հայտնի է, որ  
մոր մահից երկու տարի հետո՝ 1920 թ., Աշո-  
տը մեկնել է Բաքու՝ երբոր մոտ: Նա բաներիտ  
դպրոց է հաճախել, սովորել է նաեւ քյամանչա  
նվագել: Երիտասարդ հասակում ունենալով  
առողջական խնդիրներ, բանակ չէր զորակոչ-  
վել, «անպիտանի էր» նաեւ նավթարդյունաբե-  
րության բնագավառում աշխատելու համար:  
Աշոտի խաղաղ ու հանգիստ բնավորությու-  
նը շուտով անհամատեղելի է դառնում «սե-  
քաղաքին»: Նա ձգտում էր ժամ առաջ վերա-  
դառնալ, բայց ո՞ր... Հին Գորիսը ծանր, ֆիզի-  
կական աշխատանքի փակուղի էր, իսկ ահա  
Գորիս քաղաքը զարգանում էր, անցուղարձը  
մեծ էր, մտածում են, որ նա կարող է այդտեղ  
սազանդար լինել եւ վաստակել... Եղբայրը՝  
Տիգրանը, ներ է դնում իր ողջ հնարավորու-  
թյունները եւ Գորիս քաղաքում Աշոտի համար

**Էջ 5** զնուն փոքրիկ տնակով հողանաս: Այդ ժամանակ նրանց հայրը՝ Հայրապետը, որը գյուղում ոչ մի սեփականություն չուներ են արդեն 74 տարեկան էր, բատրակ (նախարպան) էր Գորիսի այն նույն տանը, որ հարցազրույցում նշվում է իբրև Աշոտի ծնված տուն (կարծում են՝ հնարավոր է ճշտել տանտիրոջ անունը, ում մոտ բատրակ է եղել Հայրապետը):

**Գուսանի ամուսնությունը**

**«18-20 տարեկան էի, սիրում էի առաջին անգամ: Սեւ, կրակի պես աչքեր ուներ նա, երկար մազեր: Բայց մեզ բաժանեցին...»:**

Գորիսում՝ Գուսան Աշոտի ծննդյան 70, թե՛ 75-ամյակի տոնակատարության ժամանակ վարպետի ահա այս խոսքերով սկսեց իր էլույթը Հայաստանի գրողների միության նախագահ, գրող, հրապարակախոս Վարդգես Պետրոսյանը (այդ խոսքը կա «Սյունյաց երկրի» հրատարակած համարում):

Աշոտի Բաբվում եղած տարիներին ծնողներն ամուսնացնում են նրա սիրած աղջկան: Վերադառնալուց հետո հոգսերը շատ էին, մի քանի տարի չի ամուսնանում՝ մինչև հանդիպում է սիրուն է Գորիսի մանկավարժական տեխնիկումն ավարտած մի գեղեցկուհու՝ Հասմիկին՝ Բայանդուր (Վաղատուր) գյուղացի Մանաս Բալանթարյանի դստերը: Ամուսնությունը տեղի է ունեցել 1934 թ. սեպտեմբերի 8-ին: Այդ ժամանակ Աշոտը 28 տարեկան էր, Հասմիկը՝ 17: Նրանց ամուսնական կյանքում, ինչպես գիտենք, ծնվել են 3 զավակ՝ Ռուբենը, Արաքսյանն ու Համլետը: Հայտնի է նաև, որ շուտով խաթարվել է ընտանիքի երջանկությունը. երիտասարդ մոր ու սիրելի կնոջ մոտ ախտորոշվել է անբուժելի հիվանդություն: Հասմիկը հրաժեշտ է տվել կյանքին ընդամենը 27 տարեկան հասակում՝ 1944 թվականին:

**Աշխենը**

Կնոջ մահից հետո ծանր ժամանակներ են եղել Աշոտի համար. երեք անչափահաս երեխաներ, պատերազմ, սով ու աղքատություն... Եկավ հաղթանակը, նրա հետ՝ հավատն ու հույսը... Շուտով Գորիսում հայտնվեց երկարահյուս, խիտ ունեցող, թխաբեմ մի հայուհի՝ շրջանային գյուղաբժնի գյուղատնտես Աշխենն իսպառույթան: Նա շինուհայրի Ղալին Բաղդասարի թոռնուհին էր, Գորիսի դուստրը: Ծնվել է 1922 թվականին՝ Բաբու քաղաքում, այդտեղ էլ կրթություն է ստացել՝ ագրոնոմի մասնագիտություն: Երբ սկսվել է Մեծ հայրենականը, երբ երկիրը պատերազմի մեջ է եղել, նա նստել է սպասել չէր կարող, գտել է, որ իր տեղը ճակատային զին է, մեկնել է պաշտպանելու հայրենիքը: Միլիոնների, նաև նրա կամքի ու արիության շնորհիվ եկել է հաղթանակը: Պատերազմից տուն վերադառնալուց հետո որոշել է ծնողների հետ գալ հայրենիք, այստեղ ապրել է աշխատել, իմացածը ծառայեցնել շրջանի գյուղատնտեսության զարգացման գործին, ամուսնանալ, ստեղծել խաղաղ ու երջանիկ ընտանիք: Եվ կյանքում տասնյակ արհավիրք ու փորձություն հաղթահարած աղջիկը բոլոր հնարավոր տարբերակներից ընտրել է ամենադժվարը՝ ընդունել է Գուսանի սիրոն ու ամուսնության առաջարկը եւ միանգամից դարձել երեք անչափահաս երեխաների մայր: Երաժշտական բնատուր ունակությունների շնորհիվ, Գուսանի օգնությամբ, շուտով Աշխենը սկսել է նվագել երաժշտական գործիքներով երգել, համերգային շրջապայությունների ժամանակ ուղեկցել ամուսնուն: 1951 թվականին տեղի է ունեցել մի նոր չարաբաստիկ ողբերգություն: Կյուրու գյուղի համար քարաղ տեղափոխող բեռնատարը, որի թափում են եղել համերգի գնացող Գուսան Աշոտի խմբի անդամները, ճանապարհին վթարի է ենթարկվել, Աշոտը վիրավորվել է, իսկ Աշխենը՝ զոհվել...

Շինուհայրյան մեր որոնումների արդյունքում հնարավոր եղավ գտնել Աշխենի ազգականներին, որոնց միջոցով էլ՝ այս թանկարժեք մատուցները, նրանից մնացած այս մի քանի լուսանկարը...

**Արաքսյա Ղալեջյանի մասին**

Այդ մեծ, արմատական ու ամբողջական գործին ծանոթանալուց հետո (խոսքը հատուկ համարի մասին է) ափսոսանք են ապրել, որ առանձին հոդվածով չի ներկայացվել տիկին Արաքսյան՝ Գուսանի շուրջ 30 տարեկան կյանքի եւ համերգային շրջապայություն-

ների ընկերուհին, նրա նոր երգերի առաջին ունկնդիրն ու կատարողը: Տեսնել էր պետք, թե նա ինչպիսի զգուշությամբ էր որսում Գուսանի շուրթերից դուրս եկող նոր մեղեդին եւ կրկին արտաբերում այն... Միայն իրենց հասկանալի լեզվով՝ բառերի հետադարձ արտասանությամբ, նրանք կես խոսքից իրար հասկանում էին... Տարբեր երկրներից, մայրաքաղաքից եկած քանի-քանի մարդկանց է նա ընդունել իրենց հարկի տակ, հյուրասիրել Գուսանի՝ «կռիվներում հաղթած» զինով, քյանանչայի նվագակցությամբ կատարել Աշոտի երգերը եւ անջնջելի տպավորություններով ճանապարհել հյուրերին: Գուսանի ընտանիքին մոտիկ մարդիկ լավատեղյակ են, որ նրանք սիրող ամուսիններ են եղել, որ Գուսանը երկար տարիներ տառապել է ոչ թեթև հիվանդություններով եւ, որ նրա երկարակյանքը ամուսնուհի հետքերի տիկին Արաքսիայի նվիրումով ու հոգատարությամբ էր պայմանավորված:

Երբ փորձեցի իմանալ Գուսանի մահից հետո այդ համեստ ու բարի կնոջ ապրած կյանքի պատմությունը, գորիսյան իմ բոլոր հարցումներն ապարդյուն անցան: Ոչ ոք ոչինչ չգիտեր: Դիմեցի համացանցի օգնությանը: Մի շարք մանակների ու հեռախոսազանգերի արդյունքում երեւանի էստրադային եւ ջազային արվեստի պետական քոլեջի աշխատակցուհի Կարին Դադյանի (նույն ազգանունը կրող Արաքսյայի զավակների հետ ազգակցական կապ չունի) եւ Հ.Պարոնյանի անվան երաժշտական կոմպոզիտորի պետական թատրոնի դերասանուհի ժամեն Ասրյանի օգնությամբ հաջողվեց կապվել Արաքսյայի թոռնուհու՝ Գայանե Թելունցի (Այուզանյան Դադյանի դստեր, հայրը խնձորեսկի Թելունցներից է) հետ: Նա էլ ինձ օգնեց գտնելու Հրազդանում բնակվող, իրավիճակին ավելի լավատեղյակ Սիրանուշյան՝ Արաքսյայի կուստեր դստերը:

Ավելորդ չի լինի, եթե համառոտ ներկայացնեն ինձ մոտ հավաքված տեղեկություններն Արաքսյայի մասին, քանի որ որեւէ տեղ դրանք չեն հանդիպել:

Արաքսյա Մինասի Ղալեջյանը ծնվել է Կարմիրի շրջանի Նոր Բաշենո (Գեղարքունիքի մարզի Գետիկ) գյուղում 1916 թվականին: Նրա անձնագրում ծննդյան թիվը գրված չի եղել՝ հիմքեր չլինելու պատճառով: Երգելու արտակարգ շնորհքով օժտված աղջնակը, դպրոցն ավարտելուց հետո, 16 տարեկան հասակում մեկնել է Երեւան՝ մեծ բեմում չափելու իր ուժերը:

Նրան առաջինը լսել է այն ժամանակվա ՀԽՍՀ ռադիոյի ժողովրդական գործիքների անսամբլի գեղարվեստական ղեկավար Արամ Մերանգուլյանը եւ անմիջապես աղջկան ընդունել իր խմբում (1967 թվականից՝ ՀԽՍՀ հեռուստատեսության եւ ռադիոյի Ա.Մերանգուլյանի անվան ժողովրդական գործիքների անսամբլ): Երկար ժամերով գեղեցկուհու հմայքով շատերն էին տարվել, բայց նույն խմբի ադմինիստրատոր Ալեքսանդր Մարտիրոսի Դադյանին է հաջողվել տիրել նրա սրտին: Ամուսնացել են եւ ունեցել երեք զավակ (որդի եւ երկու դուստր): Նրանց ամուսնական կյանքը երկար չի տևել, բաժանվել են: Անսամբլից ստացած գումարով Արաքսյան չէր կարող պահել երեք երեխաներին, ամենօրյա վաստակ էր անհրաժեշտ, եւ նա համերգային շրջապայությունների է մեկնել «Հայհամերգի» Գուսան Աշոտի խմբում: Այդ ժամանակ Գուսանն արդեն ավտովթարի հետևանքով կորցրել էր սիրելի կնոջը՝ Աշխենին: Շուտով նրանք որոշում են միավորել երկու խեղձված ընտանիքի ճակատագրերը եւ 1954 թ. անձանն ամուսնանում են:

Սիրանուշյան, որը բոլոր երեխաներից փոքրն էր, հիշում է, թե ինչ խանդավառություն ու ջերմություն էր տիրում երեւանի իրենց տանը՝ Ավ.Իսահակյանի ապրած շենքում (ներկայիս Սախարովի հրապարակի վրա), ապա՝ Գնունու փողոցի նոր բնակարանի երկու փոքր սենյակում, որտեղ ապրում էին վեց երեխա ու ծնողները: Նա առանձնակի ջերմությամբ արտահայտվեց իր նոր եղբայրների ու քույրիկի (Աշոտի երեխաների) հետ ունեցած հարաբերությունների մասին:

Սիրանուշյան պատմածով՝ Աշոտի դուստրը՝ Արշալույսը, պետք է ամուսնանար, սակայն բնակարանային պայմանները խիստ նեղ էին: Գուսանը դիմում է գրում ՀԿԿ Կետկոմի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանին, խնդրում է, որ առողջական խնդիրներ ունենալու պատճառով իրեն բնակարան հատկացնեն ցածր հարկում: Նրան տալիս են նոր բնակարան՝ Կասյան փողոցի վրա, ամուսիններով տեղափոխվում եւ բնակվում են այնտեղ: Ի



Շինուհայրյան մեր որոնումների շնորհիվ հնարավոր եղավ գտնել Աշխենի լուսանկարները՝ նրա ազգականներից



Արաքսյան Սյուզանայի և Սեյրանի հետ (1948 թ.)



Սյուզանան (աջից) իր դասախոս Հրաչյա Ներսիսյանի հետ (1948 թ.)



Սյուզանա Դադյանը «Սենյակ» ներկայացման մեջ, հեռուստաթատրոն



Սեյրան Դադյան

դեպ, տանն էլ Գուսանը մահացել է: Արաքսյայի երեխաներից ավագը՝ Սյուզանա Դադյանն է (1943 թ. ծնված), ավարտել է Երեւանի թատերական ինստիտուտը, անվանի դերասանուհի էր: Աշխատել է նախ՝ դրամատիկական, ապա՝ ռադիոթատրոնում, մանրապատմանների հեռուստատեսային թատրոնում: Կյանքի վերջին տարիներին հանրապետական ռադիոյում եղել է հաղորդավար: Մահացել է 1997 թվականին, թաղված է Երեւանում: Ունի դուստր՝ Գայանե, ով մանկավարժ-բանասեր է: Որդին՝ Սեյրան Դադյանը (1945 թ. ծնված) նույնպես դերասան էր, եղել է անպարար: 2010-2011 թվականներին ծանր հիվանդացել է, ծախսերը հոգալու համար վաճառել է Երեւանում ունեցած իր բնակարանը, տեղափոխվել Մոսկվա՝ բուժվելու: 2012 թվականին այդտեղ էլ կնքել իր մահկանացուն, թաղված է Մոսկվայում: Ունի որդի եւ երկու դուստր: Կրտսեր դուստրը՝ Սիրանուշյան (1947 թ. ծնված), թոշակի անցած մանկավարժ-բանասեր, բնակվում է Հրազդան քաղաքում, ունի որդի եւ դուստր: Որդին հանրապետության ռազմական ոստիկանությունում հոգեբանու-

թյան մասնագետ է: Գուսանի մահից հետո Արաքսյան բնակվել է Կասյան փողոցի վրա գտնվող բնակարանում: Ֆինանսական դժվարին պայմանների պատճառով մի քանի տարի հետո փոխել է այն, ապրել Նորքի զանգվածում: Կյանքի վերջին երկու տարում առողջական վիճակը վատթարացել է, դուստրը նրան տեղափոխել է իր մոտ՝ Հրազդան քաղաք, որտեղ էլ 2006 թվականին, 90 տարեկան հասակում, մահացել է: Սիրանուշյան պատմեց, որ մինչև կյանքի վերջին օրը մայրը հավատում էր, որ իր աճյունը կտանեն եւ կամփոփեն Աշոտի կողքին: Ցավում է, որ այդպես չեղավ: Արաքսյա Ղալեջյանը թաղված է Հրազդանում: *Սյուզանը, որ կարելու էր: Կարծում են՝ Գուսանի երգն ու ժողովրդական, աշուղական արվեստն ավելի կշահեն նույն նպատակին ուղղված մեր գործունեության համադրությամբ:* Ստեղծագործական նորանոր հաջողություններ՝ «Սյունյաց երկրին»:

# Նա իր փոքր հայրենիքի անտրոփունջ մշակը լինելով՝ նաեւ շառավիղ եղավ անցած-գնացած մեր ազնվականության

Սուսաննա Մարտիրոսյանի ծննդյան օրն է:

**Մի կողմ թողնենք շինծու եւ ձեւական սկզբունքը, թե իբր կանանց փարիքի մասին չեն բարձրաձայնում, ու նշենք՝ Սուսաննա Մարտիրոսյանը դառնում է 65 փարեկան:**  
**Եվ օգտվենք առիթից ու հայացք ձգենք նրա անցած ճանապարհին՝ համոզված լինելով, որ այդ ուղին սրբեղծարար է եղել, նաեւ ընդօրինակման արժանի՝ բազմաթիվ առումներով:**



Սուսաննա Մարտիրոսյանին, կարծում ենք, մարզկենտրոնում (եւ ոչ միայն) շատերն են ճանաչում: Եվ, այդուհանդերձ, մի քանի շտրիխ փորձենք ավելացնել նրա դիմանկարին...

Ռեժիսոր, մշակույթի եւ հասարակական գործիչ, Հայաստանի թատերական գործիչների միության անդամ, մանկավարժ...

Տարիներ առաջ էր «Սյունյաց երկրին» տված հարցազրույցում (10 նոյեմբերի 2011 թ.) արտահայտել քաղաքացու, հայրենիքի մասին իր պատկերացումը. «Միշտ համարել եմ, որ ամեն մարդ իբրեւ պարզեւ է ստանում երկրային կյանքը: Կարողացար ժամանակի մեջ տեղավորվել, կայանալ որպես քաղաքացի, մասնագետ, կին, մայր, ուրեմն ժամանակը ճիշտ են ապրել, քո գոյությանը սատարել ես երկրիդ ...»

**« Ես իմ երկրի տերն ու ծառան եմ, վտանգի պահին՝ նրա նվիրյալ պաշտպանը, խաղաղ տարիներին՝ նրա հպարտ քաղաքացին »:**

Տարիների հեռվից կարող ենք փաստել՝ այդ պատկերացումներով էլ առաջնորդվել է կյանքում:

Լենինգրադի (Սանկտ-Պետերբուրգի) Կրուպսկայայի անվան կուլտուրայի ինստիտուտը 1976 թ. ավարտելուց հետո վերադարձել է ծննդավայր Կապան եւ տարբեր պաշտոններ զբաղեցնելով աշխատել մասնագիտությամբ: Տասնութ տարի ղեկավարել է Կապանի մշակույթի կենտրոնը, չորս տարի՝ Կապանի քաղաքապետարանի մշակույթի բաժինը, հինգ տարի՝ Սյունիքի մարզպետարանի մշակույթի ոլորտը:

Այնպես որ՝ երկար տարիներ Կապանի մշակութային կյանքը բարախել-չափվել-նժարվել է Սուսաննա Մարտիրոսյանի գործունեությանը:

Նրա համար Սյունիքը եւ Կապանը հոգեւոր-մշակութային բնօրրան են եղել (ու շարունակում են այդպիսին լինել) հայ ժողովրդի համար, ինչը հավաստել է նաեւ իր գործունեությանը:

Նրա անմիջական ջանքերով Կապանում զարգացել է ժողովրդական, երգչախմբային, էստրադային, թատերական, պարային արվեստը, ինչի շնորհիվ բազմաթիվ խմբեր արժանացել են «Ժողովրդական կոլեկտիվ» կոչման:

Այդ խմբերից շատերը մասնակցել են համամիութենական եւ հանրապետական փառատոների՝ զբաղեցնելով մրցանակային տեղեր:

Բազմաթիվ են նրա նախաձեռնությունները մշակույթի բնագավառում. թատերական եւ ուսանողական փառատոներ, Կապանի տոն ու համաժողովրդական այլ տոնախմբություններ, երիտասարդության համար ժամանցային հնարավորությունների ստեղծում:

Սակայն մշակույթի ոլորտով չի սահմանափակվել նրա գործունեությունը:

Եղել եւ այսօր էլ մնում է մեր տարածաշրջանի մերկ նյարդերից մեկը ու բացառիկ նրբանկատությամբ եւ զգայունությամբ է հակադրվում մեզանում երեւան եկող ամեն մի մերժելի երեւույթի:

Այն քչերից է, ով իր փոքր հայրենիքի անտրոփունջ մշակը լինելով՝ նաեւ յուրօրինակ շառավիղ եղավ անցած-գնացած մեր ազնվականության:

Դա արտահայտվեց նաեւ մտավորական ասվածի իր պատկերացումի մեջ. «...արարող միտք, պատասխանատվության բարձր զգացում, ինտելեկտ, ազգային արժեհամակարգի արյունակցություն... Մարդ, ով չի ստում, չի բամբասում, չի շողորորթում, ով երեսպաշտ չէ, հազար դիմակ չունի բոլոր դեպքերի ու դեմքերի համար...»:

Ու ոչ միայն հավատարիմ մնաց այդ բանաձեւին, այլեւ փորձեց մնան ներկայությանը ուժեղացնել մեր երթը:

Երեւանից չերեւացող Սյունիքում քանիքանի անգամ, երկրի իրական հոգսերից ու ժողովրդից օտարված պետական այրերի կուրության եւ լռության համապատկերի վրա, ծայն բարձրացրեց մեր երկրամասի արժանապատվության համար:

Արեց եւ անում է հնարավորը, որ իր սիրելի բնօրրանը, բոլորիս Կապանն արեւոտ հովիտ լինի մարդկանց համար, որ մարդկային վատ հարաբերություններն ու բարբեր չկարողանան խուժել մեր լեռնաշխարհ:

Այսօր էլ, երբ Հայաստան երկիրը փորձում են մտցնել կեցության նոր ոլորտ, երբ դարերի խորքից սկիզբ առնող արժեքները վերանայելու, վերահիմաստավորելու փորձեր են արվում, այդպիսի լեռնաշխարհի հոգեվարք ապրող գյուղերը, բնակավայրերում փակված-փակվող դռները, մարդու ոտքի եւ պատարագի կարոտ մեր սրբավայրերը, օտար ափերում երջանկություն որոնող մեր հայրենակիցների շարքերի ստվարացումը:

Երբ հայրենի երկրամասը վտանգի մեջ է եղել, նա կողք չի կանգնել ու չի մտածել, թե դա միայն մեր քաջագուն տղերքի գործն է: Ու հիշել է, որ հատկապես Սյունիքում հոգեւորն ու մշակույթն Աստուծոց հետո հաջորդ արարիչն են եղել: Հիշել է, որ Սյունիքը դարերի փորձություններին դիմացել է ոչ միայն զորական ուժով ու անգերազանցելի այրուծիով, այլեւ խոսքի ու արվեստի ուժով, Աստվածաշունչ թարգմանելով, Ավետարաններ երկնելով...



Տիգրան Մանսուրյանի հետ



1985թ., Կապանի պարի համույթը (ղեկավար՝ Բորիկ Հարությունյան, տնօրեն՝ Սուսաննա Մարտիրոսյան)

Ու ձգտել է այդ հավատամքով ապրել: Եվ ստացվել է: Եվ կարողացել է այդպիսի մասնակցել մեր վերջին հերոսամարտին ու հայոց անկախ պետականության վերականգնմանը:

Այդ առումով ուշագրավ է նրա ամփոփումը. «Անկախությանը մենք տվեցինք ամեն ինչ, կյանք՝ ամուսինս՝ Գագիկ Հակոբյանը, զոհվեց 1993 թ. հոկտեմբերի 30-ին, կորսված երջանկություն, երկու զավակիս անհայր մանկություն...»:

Այդ տարիների նրա գործունեության մասին ոչ պակաս խոսում է մեկ այլ դրվագ: Երբ 1992-ի սեպտեմբերի 17-ին հրետակոծվեց Կապանի մշակույթի կենտրոնը, ամեն ինչ արեց (Կապանի լեռնաշխարհում կոմբինատի լուսահոգի տնօրեն Գառնիկ Առաքելյանի եւ ՀՀ մշակույթի նախարար Հակոբ Մովսեսի աջակցությամբ), որ պատերազմական գործողությունների թատերաբեմ դարձած Կապանում հնարավորինս արագ վերականգնվի մշակույթի կենտրոնը՝ նպատակ ունենալով այդպիսի բարձրացնել կապանցու ոգին:

Այնուհետեւ՝ հաճելիորեն նկատել ենք բանի աշխարհի հետ նրա արյունակցությունը, այդ ոլորտի մարդկանց հանդեպ նրա հարգանքն ու պատկառանքը:

Այդ հատկանիշների շնորհիվ է նաեւ, որ եղել ու մնում է «Սյունյաց երկրի» բարեկամը: Օգոստոսի 17-ին Կապան քաղաքի տոնն էր:

Համայնքի ամբողջ բնակչության ակտիվ մասնակցությամբ կայացած գեղեցիկ տոնակատարության բազմաթիվ հիշարժան բաղադրիչներից մեկը կամ տոնակատարության առանցքը մշակութային էջն էր. որքան շատ ստեղծագործողներ, բարձրարվեստ կատարողներ ...

Տարիների մշակութային երթի շարունակությունն էր դա՝ նոր եւ չքնաղ դերակատարներով՝ հիմքում ունենալով ավագների արած-դրածը,

ավագների մանրագործած ավանդույթները:

Այնպես որ՝ Սուսաննա Մարտիրոսյանի եւ նրա սերնդակիցների ցանած հունդն առատ հունձքի դաշտ է բերել երիտասարդներին:

Եվ, իհարկե, Սուսաննա Մարտիրոսյանը կին է, մայր է, հայ օջախի պահապան: Ու աստվածատուր այդ առաքելությունն իրականացրել եւ իրականացնում է լավագույնս:

Արցախյան պատերազմում ամուսնու կորցնելուց հետո միայնակ, հայ ավանդական օջախին վայել արժեքներով, դաստիարակեց երկու զավակին, այսօր էլ հովանու տակ է առել հինգ թոռանը:

Այդ ամենի համար է, որ արժանացել է ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալի, հանրապետական ու նախկին միութենական մարմինների պատվոգրերի ու գերատեսչական մեդալների:

Այդուհանդերձ...

Տարիներ առաջ ՀՀ վաստակավոր արտիստ Վազգեն Սարգսյանը՝ Սուսաննա Մարտիրոսյանին նվիրված ակնարկում, նրա կարգախոս-սկզբունքն էր հիշել-հիշեցրել՝ «Այս աշխարհում ես դեռ գործեր ունեմ...»:

Այդ կարգախոսը դողանցում է նաեւ այսօր: Նրա մերօրյա չափազանց ակտիվ գործունեությունը, նրա գլխավորած «Ծիածան» առաջնորդների կրթական կենտրոնն՝ ՀՀ-ի ժամանակ առ ժամանակ լույս աշխարհ բերող եւ կյանքի կոչվող նախաձեռնությունները դա են վկայում:

Ահա, թե ինչու «Սյունյաց երկիրը» չկարողացավ անտարբեր անցնել նրա հոբելյանի կողքով:

Ծնունդը շնորհավոր, հարգելի Սուսաննա: Իսկապես, Դուք դեռ շատ անելիք ունեք, ինչին եւ սպասում ենք:

**ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**  
**6 սեպտեմբերի 2019թ.**



### Քաջարանը հաղթանակ տարավ Բուլղարիայում

Քաջարանի Արվեստի դպրոցի Թատերարվեստի բաժնի սաներն առաջին պատվավոր տեղը զբաղեցրեցին «СЛАВЯНСКИЙ ВЕНЕЦ» միջազգային փառատոնում, որին մասնակցում էին խմբեր տարբեր երկրներից:

«Մշակութային Սյունիք» լրատվական պորտալ

## Տոնախմբությունն Վաչագանում

Օգոստոսի 25-ին՝ երեկոյան դեմ, Վաչագանի ժողովուրդը մեծով ու փոքրով, հավաքվել էր գյուղամիջոցում... Մշակույթի և սպորտի մարմինը համախմբված էր արտերկրում բնակվող վաչագանցիներ, հրավիրված անձինք: Ի սկզբանե անմիջական մթնոլորտ ստեղծեց հանդիսավար Դավիթ Սարգսյանը՝ շնորհավորելով վաչագանցիներին հիշարժան օրվա առթիվ և հայտարարելով առաջին ուրախ մրցույթի պայմանները: Ի դեպ, մրցույթներ շատ եղան երեկոյի ընթացքում, աչքի ընկածները պարզեատրվեցին մրցանակներով: Դե իսկ ամբողջ երեկոյի ընթացքում անպակաս էին երգն ու պարը, ուրախ տրամադրությունը, տոնական հյուրասիրությունը: Նաև անցկացվեց մրցույթ՝ «Ճանաչե՞ք Վաչագանը» թեմայով, հավաքվածները պիտի կռահեին, թե ում տունն է պատկերված լուսանկարում, որ ներկայացվում էր մեծադիր էկրանին:



Ի վերջո, տոնախմբությունը տարբեր սերունդների վաչագանցիներին համախմբելու մի պատեհ առիթ էր, որ նախաձեռնել էր Կանադայում բնակվող Վաչագանի պատվելի գավակ Գորիսի Գեորգյանը, ում մեջ էր հղացել վաչագանցիներին միավորելու գաղափարը: Միջոցառման կայացմանը մեծապես նպաստել էին մոսկվայաբնակ Տիգրան Բունիաթյանը, իսկ կազմակերպչական հարցերով՝ թաղային լիազոր Սվետա Օհանջանյանը, Ստեփան Դոնյանը: Ասում են՝ առաջին փորձն անհաջող կլինի, բայց տոնախմբությունն ըստ ամենայնի ստացվեց, և համոզմունք

### Նշվեց Դավիթ Բեկ գյուղի օրը

Սեպտեմբերի 2-ին Կապան համայնքի Դավիթեկ գյուղական բնակավայրում նշվեց գյուղի 250-ամյակը: Միջոցառմանը ներկա էին Կապան համայնքի ղեկավար Գեորգ Փարսյանը, համայնքապետարանի աշխատակիցներ, հյուրեր և գյուղի բնակիչներ: Միջոցառումը մեկնարկեց սուրբ Գայանե եկեղեցու բակում, որտեղ համառոտ ակնարկով ներկայացվեց գյուղի պատմական և հերոսական անցյալը, ինչպես նաև ներկա ժամանակները: Հնչեցին գյուղին նվիրված բանաստեղծություններ և երգեր: Դավիթեկի օրն առավել տոնական դարձրեցին գյուղի դպրոցի աշակերտները, ովքեր իրենց պատրաստած գեղեցիկ կատարումներով արժանացան ներկաների ջերմ ընդունելությանը: Տոնական տրամադրությունը շարունակվեց հանդիսությունների սրահում՝ համեմված հյուրասիրությամբ և կենդանի երաժշտությամբ: **Կապանի համայնքապետարան**



### Վախճանվել է Ազնիվ Առաքելյանը



Գորիսի տարածաշրջանի հասարակությունը կորցրեց իր լավագույն զավակներից մեկին: Օգոստոսի 22-ի առավոտյան երկրային կյանքին հրաժեշտ տվեց Ազնիվ Վոլոդյայի Առաքելյանը:

Հրեկոմի հրահանգիչ: 1981թ. փետրվարից՝ Քարաշենի կոլտնտեսության նախագահ: Մինչև կենսաթոշակի անցնելը պատասխանատու աշխատանք է կատարել Հայգյուղտեխնիկայի շրջանային միավորումում, Արդշինբանկի Գորիսի մասնաճյուղում: Ամուսնացել էր Անահիտ Գրիգորյանի հետ, ունեցել են երկու դուստր, մեկ որդի: Շրջապատված էր իր զավակների, թոռների, քույրերի, մյուս բարեկամների

Նրա մահն անսպասելի էր, որովհետև իր կենսուրախությամբ, շարժունությամբ, ծրագրերով ասես հավաստում էր, որ լավագույն օրերը տակավին առջեւում են: Բայց ինչպես ասում են՝ մարդը ծրագրում է, Աստված՝ տնօրինում: Ազնիվ Առաքելյանը ծնվել է 1951թ. հունվարի 1-ին Քարաշեն գյուղում:

Նրա մահն անսպասելի էր, որովհետև իր կենսուրախությամբ, շարժունությամբ, ծրագրերով ասես հավաստում էր, որ լավագույն օրերը տակավին առջեւում են: Բայց ինչպես ասում են՝ մարդը ծրագրում է, Աստված՝ տնօրինում: Ազնիվ Առաքելյանը ծնվել է 1951թ. հունվարի 1-ին Քարաշեն գյուղում:

Ութամյա կրթություն է ստացել գյուղի դպրոցում, այնուհետև ավարտել Գորիսի թիվ 3 միջնակարգ դպրոցը: 1973-ին Երեւանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտում ավարտելուց հետո աշխատանքի է անցել Քարաշենի կոլտնտեսությունում անասնաբույժ: 1974-1975 թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1976-1979 թվականներին աշխատել է ՀԼԿԵՄ Գորիսի շրջկոմի երկրորդ քարտուղար, այնուհետև՝ մինչև 1981թ., ՀԿԿ Գորիսի

Ութամյա կրթություն է ստացել գյուղի դպրոցում, այնուհետև ավարտել Գորիսի թիվ 3 միջնակարգ դպրոցը: 1973-ին Երեւանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտում ավարտելուց հետո աշխատանքի է անցել Քարաշենի կոլտնտեսությունում անասնաբույժ: 1974-1975 թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1976-1979 թվականներին աշխատել է ՀԼԿԵՄ Գորիսի շրջկոմի երկրորդ քարտուղար, այնուհետև՝ մինչև 1981թ., ՀԿԿ Գորիսի

Նուրբ հումորի տեր էր, լավ տիրապետում էր դրա բանահյուսական ժանրին, համով-հոտով պատմում ամեն անգամ յուրովի ներկայացնելով: Ահա այս որակներն առավել ծանր ու ցավալի են դարձնում նրա անդամալի կորուստը: Բոլոր նրանք, ովքեր ճանաչում են Ազնիվ Առաքելյանին, ովքեր վայելել են նրա ընկերությունն ու բարեկամությունը, մինչև իրենց կյանքի վերջ կարոտով կիշեն նրա Ազնիվ անունը: **Մի խումբ ընկերներ**

**ՆԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ** ՀՀ ԿԳՄՍՆ «Հ. Ավետիսյանի անվան № 9 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ը հայտարարում է տարածքի վարձակալության մրցույթ՝ աշակերտների որակյալ սննդի ապահովման(շարժական բուժետի կազմակերպում) նպատակով: Մրցույթը տեղի կունենա 2019թ. սեպտեմբերի 2-ին՝ ժամը 12:00: Հայտերը ներկայացնել մինչև օգոստոսի 31-ը, ժամը 15:00: Տեղեկությունների համար զանգահարել 0285-5-26-46, 093212462 հեռախոսահամարներով:

**Սյունյաց Երկիր** | www.syuniacyerkir.am | www.facebook.com/SyuniacYerkirNewspaper/

Հիմնադիր ԵՎ ՀՐԱՏԱՐԱՎԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ԴՍԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՍՎԵԼ ԱՆԷՔՍԱՆՅԱՆ**

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32: (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47: syuniacyerkir@mail.ru www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի): Հղումը «Սյունյաց երկիր» պարտադիր է:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

«ԳՈՎԱԶԳ - ԾԱՆՈՒՅՈՒՄ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1200, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 05.09.2019թ.:

**QR ԿՈՂ**